ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -164 -2026
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» «03» 2026 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, Մշակույթի զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրենի ժ/պ Կարեն Ավետիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման օրենքի «1124. Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի» ծրագրի «11005. Աջակցություն գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը» (տող՝ «Գրքերի միջազգային ցուցահանդեսներին և նախագծերին մասնակցություն») միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել 2026թ. Բոլոնյայի և Վարշավայի գրքի միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցության ծրագիրը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1-ի,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2-ի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված

ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների

շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային

հաշվետվությունը ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. իրականացնել ծրագրերի հանրայնացման անհրաժեշտ գովազդատեղեկատվական արշավներ սոցիալական հարթակներում (տոմսերի վաճառքի հարթակները սոցիալական հարթակներ չեն համարվում): Միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ազդագրեր, հրավիրատոմսեր, պաստառներ՝ ներառյալ էլեկտրոնային տարբերակները) պարտադիր կերպով հրապարակել ՀՀ զինանշանը և պետական մարմնի անվանումը՝ պահպանելով «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Գովազդատեղեկատվական բնույթի այլ հրապարակումներում (մամուլի հրապարակումներ, համերգային ծրագիր-բուկլետներ, տեսահոլովակներ, մամլո հաղորդագրություններ, ասուլիսներ, գրավոր և/կամ բանավոր այլ խոսք) կազմակերպությունը պարտավոր է ոչ միայն հրապարակել ՀՀ զինանշանն ու պետական մարմնի անունը, այլև նշել ԿԳՄՄՆ մասնակցության ձևաչափը (ԿԳՄՄՆ ֆինանսավորմամբ, ԿԳՄՄՆ աջակցությամբ), որը կարող է արտահայտվել ինչպես ուղղակի ֆինանսավորման, այնպես էլ թատերահամերգային դահլիճների տրամադրման և կազմակերպական այլ աջակցության տեսքով:

Համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումներին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան, իսկ միջոցառումների համար կազմակերպության կողմից ընդգրկվող աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորել ՀՀ Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է հատկացնում է 10058.9 հազար (տաս միլիոն հիսունութ հազար ինը հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 24-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2026 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2026 թվականի հուլիսի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացույցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն՝ համաձայն Հավելված N 4-ի:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների

խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Մշակույթի զարգացման» հիմնադրամ
ք. Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Արամի 1
Կառավարական տուն N 2	Ակբա բանկ ԲԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 220313350757000
Հ/Հ 900011032811	ՀՎՀՀ 02907068
ՀՎՀՀ 02698732	Տնօրենի ժ/պ՝
Գլխավոր քարտուղար՝	
_____ Հ. Հակոբյան	_____ Կ. Ավետիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 20 » 03 » 2026 թ.
N ՄՇԴ - 164 -2026 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

2026 թ. Բոլոնյայի և Վարշավայի գրքի միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցության

1	Կազմակերպության անվանում	«Մշակույթի զարգացման» հիմնադրամ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Արամի 1
3	Ծրագրի անվանում	2026 թ. Բոլոնյայի և Վարշավայի գրքի միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցության ծրագիր
3.1	Բովանդակություն	ՀՀ ԿԳՄՍ նախարարության գրատարածման, հայ գրականությունն արտերկրում ավելի ճանաչելի դարձնելու քաղաքականությունը միտված է ապահովելու գրական դաշտի բոլոր օղակների հավասարաչափ զարգացում, գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանում, զարգացում և տարածում, հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման, գրատարածման բնագավառում միջազգային համագործակցության համար նպաստավոր պայմանների ստեղծում: Այդ քաղաքականությունն իրականացվում է նաև գրքի միջազգային ցուցահանդեսներին մեր երկրի մասնակցությամբ: Բոլոնյայի և Վարշավայի գրքի միջազգային ցուցահանդեսները ռազմավարական նշանակություն ունեն Հայաստանի համար՝ հաշվի առնելով դրանց մասնագիտական ուղղվածությունը, աշխարհագրական ծածկույթը և շուկաների առանձնահատկությունները: Դրանք հնարավորություն են տալիս ներկայացնելու հայ գրականությունը, խթանելու թարգմանությունները տարբեր լեզուներով, ինչպես նաև ստեղծելու նոր համագործակցություններ հրատարակիչների, գործակալների և մշակութային կառույցների միջև: Հայաստանի տաղավարում կներկայացվի նաև «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը, որով ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն աջակցում է

		արտերկրի այն հրատարակչություններին, որոնք ցանկանում են իրենց երկրում օտար լեզվով հրատարակել հայ դասական և ժամանակակից գրականություն: Ծրագրի նպատակը հայ գրականությունը մեր երկրի սահմաններից դուրս հայտնի դարձնելն է: Այն ոչ միայն կնպաստի հայ գրողների հանրահռչակմանը, այլև կնպաստի մեր մշակույթի և երկրի ճանաչելիության մակարդակի բարձրացմանը: «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը Բոլոնյայում և Վարշավայում ներկայացնելով՝ պայմաններ են ստեղծվում, որ արտասահմանյան հրատարակչություններն իրազեկ և շահագրգիռ լինեն թարգմանաբար հրատարակելու հայ դասական և ժամանակակից գրականություն:
3.2	Նպատակ	Բոլոնյայի և Վարշավայի գրքի միջազգային ցուցահանդեսում ազգային տաղավար ունենալու նպատակն է, որ հայ գրական գործակալները և հրատարակիչները կարողանան իրենց հանդիպումները ազատորեն նշանակել մեր տաղավարում, ներկայացնել իրենց հրատարակությունները, գրողներին, գնել և վաճառել ստեղծագործությունների գույքային իրավունքներ, ծանոթանալ գրքերի ձևավորման միջազգային միտումներին և նորարարություններին՝ դրանք կիրառելով Հայաստանում: Նաև ցուցահանդեսների շնորհիվ է, որ Հայաստանում այժմ գրահրատարակչության, հատկապես և գրական թարգմանությունների մեծ վերելք կա: Տաղավարներ ունենալը հնարավորություն կտա նաև՝ - ներկայացնելու պետական գրահրատարակչական ծրագրերի և պետական դրամաշնորհների շրջանակում հրատարակված գրքեր և նախագծեր, - ապահովելու պետական աջակցության արդյունքում ստեղծված մշակութային բովանդակության միջազգային տեսանելիություն և արդյունավետ օգտագործում, - խթանելու պետական դրամաշնորհ ստացած հրատարակչությունների, հեղինակների և նկարազարդողների միջազգային համագործակցությունները, - ստեղծելու գործարար և մասնագիտական շփումների հարթակ պետական և մասնավոր ոլորտների միջև, - նպաստելու հայկական գրքի միջազգային առաջխաղացմանը՝ որպես մշակութային դիվանագիտության գործիք: - ներկայացնելու ժամանակակից և դասական հայ գրականություն, մանկական գրքեր, նկարազարդումներ և

		հրատարակչական արտադրանք, - ստեղծելու մասնագիտական շփումների և գործարար հանդիպումների հարթակ հայ և օտարերկրյա հրատարակիչների, գործակալների և մշակութային կազմակերպությունների միջև, - խթանելու հայ գրականության թարգմանությունը և արտոնագրային համագործակցությունները, - բարձրացնելու հայկական գրահրատարակչական ոլորտի միջազգային ճանաչելիությունը:
3.3	Անցկացման ժամկետ	Մարտ, 2026 – հունիս, 2026
3.4	Անցկացման վայր	Բոլոնյա (Իտալիա), Վարշավա (Լեհաստան)
3.5	Ակնկալվող արդյունքներ	Բոլոնյայի (Իտալիա) և Վարշավայի (Լեհաստան) գրքի միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովման արդյունքը աշխարհում ընդունելի և ճանաչելի գրականություն ունենալն է: «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը պարբերաբար և տևական իրականացնելուց հետո տարիներ անց մենք կունենանք շոշափելի արդյունք: Գրքի միջազգային ցուցահանդեսներում Հայաստանի ակնկալած արդյունքներն են. - գրատարածման բնագավառում միջազգային համագործակցություն - հայ գրականության հանրահռչակում արտերկրում - գրական դաշտի բոլոր օղակների զարգացում - գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանում, զարգացում և տարածում - հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծում
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	- մասնակցություն 2 գրքի միջազգային ցուցահանդեսի - կազմակերպված հայկական միասնական տաղավարներ՝ 2 - ներգրավված հրատարակչություններ՝ 8, - ներկայացված ընդհանուր գրքեր և հրատարակչական նմուշներ՝ 200 - իրականացված մասնագիտական հանդիպումներ և երկկողմ շփումներ՝ 20-30, - պայմանավորվածություններ թարգմանությունների և արտոնագրային գործակցությունների շուրջ՝ առնվազն 8, - մասնագիտական այցելություններ Հայաստանի տաղավարում՝ 1000

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032811 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝	«Մշակույթի զարգացման» հիմնադրամ ք. Երևան, Արամի 1 Ակբա բանկ ԲԲԸ Հ/Հ 220313350757000 ՀՎՀՀ 02907068 Տնօրենի ժ/պ՝
_____ Հ. Հակոբյան (ստորագրություն) Կ. Տ.	_____ Կ. Ավետիսյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
« 20 » «03 » 2026 թ.
N ՄՇԴ-164-2026 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

2026թ. Բոլոնյայի և Վարշավայի գրքի միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցության ծախսերի

N	Ծախսատեսակի անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
Ա	**Բոլոնիայի մանկական գրքի ցուցահանդեսի մասնակցության ծախսեր**				**4874.0**
1	**Տաղավարի վարձակալության ծախսեր**				**3330.6**
1.1	• ցուցահանդեսային տաղավարի պատրաստման, տարածքի (16 մ²) վարձակալման, բերնդավորման և սպասարկման ծախսեր՝ • տաղավարի վարձակալություն՝ 4 723 եվրո x 449 դրամ	հատ	1	2120.6	2120.6
1.2	տաղավարի նախագծում, ձևավորում	հատ	1	800.0	800.0
1.3	պարտադիր գրանցման վարձավճար	հատ	1	410.0	410.0
2	**Լոգիստիկ ծախսեր**				**251.4**
2.1	լոգիստիկ ծախսեր՝ ներառյալ գրքերի և այլ պարագաների տեղափոխման ծախսեր (1 կտորը՝ մինչև 23 կգ)՝ 4 կտոր հավելյալ ուղեբեռ 400 եվրո x 449 դրամ	հատ	1	179.6	179.6
2.2	ներքաղաքային տրանսպորտային ծախսեր՝ 4 փոխադրում x 40 եվրո x 449 դրամ	հատ	1	71.8	71.8
3	**Ճանապարհածախս և կեցության ծախսեր**				**838.0**
3.1	հյուրանոց (1 մարդ x 5 գիշեր x 147 եվրո x 449 դրամ)	մարդ/օր	5	66.0	330.0
3.2	օրապահիկ (1 մարդ x 5 գիշեր x 115 եվրո x 449 դրամ)	մարդ/օր	5	51.6	258.0
3.3	ավիտատոմս (Երևան-Բոլոնիա-Երևան)	հատ	1	250.0	250.0
4	**Տպագրական ծառայություններ**				**454.0**
4.1	• բուկլետ՝ 200 հատ x 700 դրամ = 140.0 հ.դ., • ֆլայեր՝ 450 հատ x 200 դրամ = 90.0 հ.դ., • այցեքարտ՝ 100 հատ x 100 դրամ = 10.0 հ.դ., • դրոշակ (բարձրությունը 30 սմ, պատվանդանը՝ քարե, ձողը՝ մետաղական, կտորը՝ ատլաս)՝ 6 հատ x 4000 դրամ = 24.0 հ.դ., • B18 տպագրությամբ էջանիշ՝ 200 հատ x 200 դրամ = 40.0 հ.դ.	հատ	1	304.0	304.0

4.2	տպագրական նյութերի ձևավորում	հատ	1	150.0	150.0
Բ	**Վարշավայի գրքի ցուցահանդեսի մասնակցության ծախսեր**				**3508.4**
1	**Տաղավարի վարձակալության ծախսեր**				**3054.4**
1.1	. ցուցահանդեսային տաղավարի պատրաստման, տարածքի (15 մ²) վարձակալման, բերնդավորման և սպասարկման ծախսեր՝ . տաղավարի վարձակալություն՝ 5021 եվրո x 449 դրամ	հատ	1	2254.4	2254.4
1.2	տաղավարի նախագծում, ձևավորում	հատ	1	800.0	800.0
2	**Տպագրական ծառայություններ**				**454.0**
2.1	. բուկլետ՝ 200 հատ x 700 դրամ = 140.0 հ.դ., . ֆլայեր՝ 450 հատ x 200 դրամ = 90.0 հ.դ., . այցեքարտ՝ 100 հատ x 100 դրամ = 10.0 հ.դ., . դրոշակ (բարձրությունը 30 սմ, պատվանդանը՝ քարե, ձողը՝ մետաղական, կտորը՝ ատլաս)՝ 6 հատ x 4000 դրամ = 24.0 հ.դ., . B18 տպագրությամբ էջանիշ՝ 200 հատ x 200 դրամ = 40.0 հ.դ.	հատ	1	304.0	304.0
2.2	տպագրական նյութերի ձևավորում	հատ	1	150.0	150.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**8382.5**
	ԱԱՀ*				**1676.5**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**10,058.9**

*ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032811
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Մշակույթի զարգացման» հիմնադրամ
ք. Երևան, Արամի 1
Ակբա բանկ ԲԲԸ
Հ/Հ 220313350757000
ՀՎՀՀ 02907068

Տնօրենի ժ/պ՝

_____ **Կ. Ավետիսյան**
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«20» «03» 2026 թ.
N ՄՇԴ - 164 - 2026 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2026 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար՝

---------- *(անուն, ազգանուն)*
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահը՝

---------- *(անուն, ազգանուն)*
(ստորագրություն)

ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ փաստաթղթերն ընդունող պատասխանատու՝

---------- *(անուն, ազգանուն)*
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 4
« 20 » « 03 » 2026 թ.
N ՄՇԴ - 164 - 2026 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3,
Կառավարական 2
ՀՎՀՀ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

« » « » 2026

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը՝ N ՄՇԴ « » « » 2026 թ.

Պետական մարմինը՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____-ի *(անուն, ազգանուն)* և կազմակերպությունը, ի դեմս « » նախագահ _____-ի *(անուն, ազգանուն)*, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ բովանդակային վարչության « » « » 2026 թ. եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2026 թ. N « » եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակում իրականացրել է միջոցառումը, իսկ պետական մարմինը վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝

---------- *(ստորագրություն)*
Կ.Տ.

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

---------- *(ստորագրություն)*

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝

---------- *(ստորագրություն)*
Կ.Տ.